PROMOTION

**«ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ**
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

10.06.2026թ.
ԵԼ-2026/Տ19
ՀՀ, ք. Երևան

ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԾՁԲ-04/12-26
ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆԸ

## ԴԻՄՈՒՄ-ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԳՐԱՎՈՐ ՊԱՀԱՆՋ

Հարգելի գործընկերներ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 50-րդ կետի համաձայն՝ Եթե կնքված պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա կնքված պայմանագրի մասին հայտարարությունում նշվում է նաև, որ դրանով սահմանված ժամկետում պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում՝ ինչպես գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնման տվյալ ընթացակարգին մասնակցելու իրավերի հիման վրա հայտ ներկայացրած մասնակիցները կարող են պատվիրատուին ներկայացնել կնքված տվյալ պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին պատասխանատու ստորաբաժանման հետ համատեղ մասնակցելու գրավոր պահանջ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հայտնում ենք, որ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հայկ Հովհաննիսյանի կամ վերջինիս կողմից լիազորված անձինք Վարուժան Էլոյանը և Արամայիս Ավետիսյանը ցանկություն ունեն մասնակցել «ՄԵԼԻՈՐԱՑԻԱ» ՓԲԸ կողմից ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԾՁԲ-04/12-26 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի պայմանագրի կատարման ընթացքին, ինչպես նաև մասնակցեն ծառայության հանձման-ընդունման գործընթացին:

Գործառույթի իրականացման համար անհրաժեշտ՝ Կարգով սահմանված փաստաթղթերը կցվում են:

ՏՆՕՐԵՆ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

PROMOTION

«ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

10.06.2026թ.
ՀՀ, ք. Երևան

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Ես՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի տնօրեն Հայկ Հովհաննիսյանս (նույնականացման քարտ՝ 017425703, տրված՝ 20.02.2025 թվականին, 004-ի կողմից), գործելով «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի կանոնադրության և Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության հիման վրա, սույնով լիազորում եմ Արամայիս Ավետիսյանին (նույնականացման քարտ՝ 010953123, տրված՝ 19.09.2019թ., 040-ի կողմից) և Վարուժան Էլոյանին (նույնականացման քարտ՝ 013799119, տրված՝ 18.04.2022թ., 001-ի կողմից)՝ հանդես գալու «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի անունից և շահերից ելնելով «Մելիորացիա» ՓԲԸ-ի կողմից «ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԾՁԲ-04/12-26» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակում:

Լիազորված անձանց վերապահվում է իրավունք՝

- ներկայացնելու և ստորագրելու անհրաժեշտ փաստաթղթեր,
- իրականացնելու անհրաժեշտ գրավոր և բանավոր հաղորդակցություն պատվիրատուի հետ,
- մասնակցելու պայմանագրի կատարման ընթացքին և ծառայությունների հանձման-ընդունման գործընթացին,
- ներկայացնելու «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի դիրքորոշումը և կատարելու ընթացակարգով նախատեսված այլ գործողություններ՝ կապված լիազորության շրջանակի հետ:
- իրականացնել պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին պատասխանատու ստորաբաժանման (մասնագիտական խմբի) հետ համատեղ մասնակցությունից բխող գնումների օրենսդրությամբ նախատեսված գործառույթները:

Սույն լիազորագիրը տրվում է մեկ տարի ժամկետով և գործում է առանց վերալիազորման իրավունքի:

ՏՆՕՐԵՆ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված շահերի բախման բացակայության մասին**

Ես՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի լիազորված անձ Արամայիս Ավետիսյանս հայտարարում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ իմ հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր), վերջիններիս կամ իմ կողմից հիմնադրած կամ բաժնեմասնակցությամբ (փայամասնակցությամբ) կազմակերպությունը չի հանդիսանում ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԾՁԲ-04/12-26 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի կողմ:

**«ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի լիազորված անձ Արամայիս Ավետիսյան**_______________

(ստորագրությունը)

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված շահերի բախման բացակայության մասին

Ես՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի տնօրեն Հայկ Հովհաննիսյանս հայտարարում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ իմ հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր), վերջիններիս կամ իմ կողմից հիմնադրած կամ բաժնեմասնակցությամբ (փայամասնակցությամբ) կազմակերպությունը չի հանդիսանում ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԾՁԲ-04/12-26 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի կողմ:

**«ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Հովհաննիսյան**
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

(ստորագրությունը)

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված շահերի բախման բացակայության մասին**

Ես՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի լիազորված անձ Վարուժան Էլոյանս հայտարարում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ իմ հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր), վերջիններիս կամ իմ կողմից հիմնադրած կամ բաժնեմասնակցությամբ (փայամասնակցությամբ) կազմակերպությունը չի հանդիսանում ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԾՁԲ-04/12-26 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի կողմ:

**«ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի լիազորված անձ Վարուժան Էլոյան** ________________

(ստորագրությունը)

Ստորև ներկայացնում եմ գործառույթի իրականացման համար կապ հաստատելու նպատակով անհրաժեշտ էլեկտրոնային փոստի հասցեի և հեռախոսահամարի վերաբերյալ տեղեկատվություն

*էլեկտրոնային փոստի հասցեն է՝ info@promotion.am:*
*հեռախոսահամարն է՝+37498389689 ,+374 77 625777*

**«ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Հովհաննիսյան**
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

(ստորագրությունը) Կ. Տ.